



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» հունիսի 2013թ.

N___70__

ք. Ստեփանակերտ

**«ԱԿԱՂԵՄԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԿԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ մասի պահանջներով ու հիմք ընդունելով ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 10-ի N 3 եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել 2011 թվականի ապրիլի 27-ին «Ակաղեմիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված N 001 հացահատիկային մշակաբույսերի (ներառյալ եգիպտացորենի) սերմերի արտադրության և վաճառքի լիցենզիան:

2. Նախարարության աշխատակազմի տնտեսական վերլուծության բաժնի պետին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

